Հաստատում եմ՝

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և

իրավունքի ինստիտուտի տնօրեն,

Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

_____________________Լ.Ա.Ղազանչյան

04. հունիսի 2021թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

Հայկ Մկրտչի Գրիգորյանի

«Զինված հակամարտության կողմերի կատարած պատերազմական հանցագործությունների քննության միջազգային-իրավական և կազմակերպական հիմքերը» թեմայով

ԺԲ.00.06 «Միջազգային իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Հայկ Մկրտչի Գրիգորյանի ատենախոսությունը նվիրված է միջազգային իրավունքի կարևորագույն հիմնախնդիրներից մեկի՝ զինված հակամարտության կողմերի կատարած պատերազմական հանցագործությունների համալիր հետազոտությանը և առկա հիմնախնդիրների բացահայտմանը:

Գրախոսվող դոկտորական ատենախոսության թեման խիստ արդիական է ու պահանջված, քանի որ գրեթե ամենուրեք, զինված հակամարտությունների շրջաններում, տեղի է ունենում պատերազմի վարման օրենքների և սովորույթների խախտում, համաչափության սկզբունքների խախտմամբ արգելված միջոցների և մեթոդների կիրառում, այդ թվում՝ հրթիռահրետանային հարվածների հասցնում խաղաղ բնակավայրերին, ռազմական գործողություն-ներում վարձկանների հավաքագրում, ուսուցում, ֆինանսավորում և (կամ) օգտագործում, մահապատիժների տեսքով դիտավորյալ սպանությունների իրականացում՝ հիմնված քաղաքական, գաղափարական, ռասայական, ազգային, կրոնական ատելության կամ թշնամանքի վրա, խոշտանգումներն ու այլ անմարդկային վերաբերմունքը, ինչպես նաև այլ հրեշավոր վայրագություններ, որոնք իրենց էությամբ և դաժանությամբ չեն կարող անպատիժ մնալ:

Ավելին, քննարկվող ատենախոսությունը հանդես է գալիս որպես զինված հակամարտության կողմերի կատարված ռազմական հանցագործությունների բացահայտման և հետաքննության արդյունավետության բարձրացման նպատակով համակարգված և գիտականորեն հիմնավորված քրեագիտական առաջարկությունների և քննչական պրակտիկայում այդ խնդիրների լուծման բարձր պահանջվածության միջև հակասության հաղթահարման միջոց:

Աշխատանքի համալիր վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ գրախոսվող դոկտորական ատենախոսությունը, որն ի դեպ հեղինակի պրակտիկ և գիտական երկարատև աշխատանքի արդյունք է, նվիրված է հենց այդ ոճրագործությունների քննությանը և միջազգային իրավական քննության եղանակներին: Ինչպես իրավացիորեն նշում է հեղինակը, զինված հակամարտության կողմերի կատարած հանցագործությունների բնույթը ուղղակի կախվածության մեջ է գտվնում այն իրականացնող կողմերից (էջ 199), իսկ քաղաքացիական բնակչությունը, ինչպես նաև առանձին քաղաքացիական անձինք չպետք է լինեն հարձակման թիրախ, ինչը հստակ սահմանված է մի շարք միջազգային իրավական ակտերով (էջ 205): Այնուամենայնիվ, ոչ բոլոր դեպքերում է, որ պետությունների ղեկավարները և այլ բարձրաստիճան պաշտոնյաները հետապնդվում են պատերազմական (միջազգային) հանցագործություններ կատարելու համար (էջ 322):

Ուշագրավ է այն փաստը, որ հեղինակը վերլուծության ենթարկելով միջազգային և տարածաշրջանային հակամարտությունները, դրանց առնչվող դրույթներն ու դրանցից բխող հետևությունները, դրանց ընթացքում կատարած հանցանքները, այլ պետությունների կողմից պատերազմական հանցանքների քննության փորձը, (էջ 69, 76-77, 85, 87, 101-106, 108, 156, 161, 179, 182, 199, 205, 212, 218-220, 228-229, 309 և այլն), շեշտադրել է, և ամբողջական տեսքով է ներկայացրել Լեռնային Ղարաբաղյան (Արցախյան) հակամարտության ընթացքում Ադրբեջանի Հանրպետության կողմից իրականցված պատերազմական հանցագործությունները, այդ թվում՝ մանրակրկիտ անդրադարձ կատարելով 2020թ.-ի 44 օրյա պատերազմի ընթացքում Արցախի բնակչության դեմ իրականացված ոճրագործություններին, դրանց հեղինակների բացահայտմանն և վերջիններիս միջազգային քրեական պատասխանատվության ենթարկելու հարցին: Ակնահայտ է, որ Արցախի Հանրապետության դեմ ադրբեջանաթուրքական զույգի հրահրած 44-օրյա ագրեսիայի ընթացքում իրականացվել են բազմաթիվ պատերազմական հանցագործություններ, որոնք պետք է արժանանան համարժեք քաղաքական և

իրավական գնահատականների, հակառակ դեպքում մարդկության դեմ թուրքական պետությունների ռազմաքաղաքական ղեկավարների կատարած հերթական ոճրագործությունն անպատիժ կմնա՝ պարարտ հող նախապատրաստելով նոր ցեղասպանությունների համար: Հետևաբար, ***այս առումով քննարվող ատենախոսությունը ունի խիստ գործնական նշանակություն:***

Հեղինակն օգտագործելով գիտական հետազոտության տարբեր մեթոդներ, կարողացել է լիովին բացահայտել ադրբեջանաթուրքական ագրեսիայի հետևանքները, հիմնավորել է, որ այդ ագրեսիան իր բնույթով և կատարման բիրթ եղանակով, ուղղված էր ոչ միայն Արցախի ժողովրդի, այլ նաև մարդկության դեմ, քանի որ թշնամին խտրականություն չէր դնում կիրառվող զինատեսակների (այդ թվում միջազգային օրենքով արգելված), այլև զինվորի և քաղաքացիական համայնքի ներկայացուցչի, երեխաների, տարեց մարդկանց միջև, այն պարզ պատճառով, որ նրա նպատակն էր Արցախի բնիկ ժողովրդի ֆիզիկական ոչնչացումը: ***Այս առումով էլ գրախոսվող ատենախոսությունը խիստ արդիական է, քանի որ հեղինակին հաջողվել է բացահայտել ագրեսորի բուն նպատակը և այդ նպատակին հասնելու հանցավոր եղանակներն ու մեթոդները***:

Քննարկվող աշխատությունում իրականացվել է զինված հակամարտության կողմերի կատարած պատերազմական հանցագործությունների քննության միջազգային իրավական և կազմակերպական խնդիրների համալիր գիտական հետազոտություն: Զինված հակամարտություն վարելու կանոնները կարգավորող օրենսդրության կայացման և զարգացման պատմաիրավական վերլուծության հիման վրա մշակել է պատերազմական հանցագործություններ կատարեու համար նախատեսված քրեական հետապնդման ինստիտուտի կայացման և զարգացման հեղինակային ժամանակագրական դասակարգում: Ավելին, հեղինակի կողմից մշակվել է պատերազմական հանցագործությունների քննության և դրանք կատարած անձանց քրեական հետապնդման հեղինակային հայեցակարգ, որի բովանդակությունն են կազմում գիտականորեն հիմնավորված տեսական դրույթներ՝ պատերազմական հանցագործությունների քննության իրավական ապահովման, կազմակերպման և ապացուցողական տեղեկատվության հավաքագրման, պատերազմական հանցագործությունների կատարմանը մասնակից պաշտոնատար անձանց հետախուզման, ձերբակալման ու հանձման և այդ անձանց նկատմամբ միջազգային դատավարության իրականացման վերաբերյալ: ***Ատենախոսությունում միջազգային քրեական իրավունքի համատեքստում քննարկվել են պատերազմական հանցագործության***

հանցակազմի տարրերը, տրվել է պատերազմական հանցագործության հեղինակային սահմանումը, ներկայացվել է պատերազմական հանցագործությունների հեղինակային դասակարգումը: Ներկայացվել է նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսդրության հետագա կատարելագործմանն ուղղված առաջարկություններ: ***Հեղինակը հանգամանորեն ուսումնասիրել է նաև թշնանի պետության ռազմաքաղաքական ղեկավարության ներկայացուցիչներին քրեական պատասխանատվության ենթարկելու խնդիրները***: Աշխատանքում հիմնավորվել է պատերազմական հանցագործությունների վերաբերյալ միջազգային օրենքների իմպլեմենտացիայի անհրաժեշտությունը ազգային օրենսդրությունում:

Հեղինակը ներկայացրել է Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի զինծառայողների կատարած պատերազմական հանցագործությունների որակման խնդրահարույց հարցերը, վերլուծել է ագրեսիայի հանցակազմը, ինչպես նաև պատերազմական հանցագործությունների տարրերը՝ ցեղասպանության, միջազգային ահաբեկչության և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների հարակից տարրերից սահմանազատող հատկանիշները:

Աշխատանքում հիմնավոր-վում է միջազգային քրեական դատարանի կանոնադրության համապատասխան դրույթների և ընթացակարգերի ներմուծման միջոցով քրեական դատավարության օրենսդրության կատարելագործման, ինչպես նաև զինված հակամարտության շրջաններում կատարված հանցագործությունների քննության միասնական իրավական կանոնակարգի ստեղծման անհրաժեշտությունը: Մշակվել են ոչ ընտրովի ավիացիոն և հրթիռահրետանային սպառազինության տեսակներիր կիրառման քննության մեթոդական ապահովման գիտագործնական առաջարկություններ:

Հեղինակային առաջարկությունները և հայեցակարգային մոտեցումները կարող են հաշվի առնվել միջազգային համաձայնագրերի նախագծեր մշակելիս, արդարադատության միջազգային մարմիններ ստեղծելիս և բարեփոխելիս, կարող են կիրառվել ՀՀ իշխանության պետական մարմինների օրինաստեղծ գործունեությունում՝ միջազգային իրավունքի սուբեկտների կողմից խաղաղության և անվտանգության ապահովման միջազգային պարտավորություններ կատարելու մասին օրինագծերը մշակելիս, որպես հիմնավորում կարող են ծառայել նորմատիվ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու համար քրեական հետապնդման ոլորտում հայկական օրենսդրության հետագա զարգացմանը: Բացի այդ, կարող են դրվել պատերազմական հանցագործությունների սուբեկտների միջազգային քրեական հետապնդման արդի խնդիրներին

նվիրված գիտական հրապարակումների հիմքում, ինչպես նաև՝ օգտագործել միջազգային քրեական, միջազգային մարդասիրական իրավունքի, քրեական իրավունքի, քրեական դատավարության և քրեագիտության ոլորտներում ուսումնա-գործնական և գիտական աշխատություններ իրականացնելիս:

Աշխատանքի դրական արժանիքներից է նաև այն, որ հեղինակը լիարժեքորեն է օգտագործել ազգային և միջազգային նորմատիվ-իրավական նյութերը տեսական-մասնագիտական գրականությունը, ինչի շնորհիվ հեղինակին հաջողվել է լիովին բացահայտել թեմայի էությունն ու բովանդակությունը, իսկ աշխատանքում ձևակերպված եզրահանգումներն ու գործական առաջարկությունները ներկայանում են գիտականորեն հիմնավորված և տրամաբանորեն փաստարկված:

Դրական գնահատելով մեծածավալ աշխատանքը, այնուհանդերձ ունենք որոշակի նկատառումներ որոնք հանգում են հետևյալին.

1. Պաշտպանության ներկայացվող 10-րդ կետի դրույթում հեղինակը որպես նորույթ նշում է. «**Առաջարկություններ՝ ռազմական հանցագործություններ կատարած անձանց, այդ թվում՝ ռազմագերիների անհատականության վերաբերյալ ապացույցների աղբյուրների լեգենդման վերաբերյալ, ներարյալ նրանց, ովքեր համագործակցել են ՀՀ քննչական մարմինների հետ**», սակայն չի բացահայտում նշված առաջարկությունների էությունը, ինչը անորոշ է դարձնում վերջիններիս:

2. Անհրաժեշտ է աշխատանքի շրջանակներում նշել, որ լրացուցիչ հիմնավորման կարիք ունի պաշտպանության 12-րդ կետում ներկայացված դրույթը, որտեղ հեղինակը որպես նորույթ դիտարկում է. «**Զինված հակամարտության հակամարտող կողմերի ավիացիոն եւ հրթիռահրետանային սպառազինության տեսակների անխտիր կիրառման վերաբերայլ հետաքննության մեթոդական ապահովման գիտագործնական առաջարկությունների համալիր**», միևնույն ժամանակ առանց պարազաբանման թողնելով այդ առաջարկությունների էությունը:

3. Կարծում ենք, որ աշխատությունում անհրաժեշտ էր համալիր եղանակով ներկայացնել նաև Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի զեկույցների նյութերը՝ կապված միջազգային մարդասիրական իրավունքի բացահայտ խախտումների վերաբերյալ, մասնավորապես Հայաստանի և Արցախի խաղաղ բնակչության նկատմամբ թիրախային հարձակումների վերաբերյալ:

4. Աշխատանքում տեղ են գտել նաև այլ թերություններն, այդ թվում նաև տեխնիկական բնույթի, օրինակ՝ ՀՀ Գերագույն դատարանի փոխարեն պետք է հիշատակել ՀՀ Վճռաբեկ դատարան (էջ 17, սեղմագիր էջ 8) և այլն:

Այնուամենայնիվ, վերոնշյալ դիտողություններն, ըստ էության, կրում են մասնակի բնույթ և չեն արժեզրկում հաջողված ատենախոսության դրույթները:

Գրախոսվող հետազոտության գիտական նորույթը արտահայտված է աշխատանքի եզրահանգումներում, տեսական հետևություններում և գործող օրենսդրության կատարելագործմանն ուղղված գործնական առաջարկություններում:

Քննարկվող հետազոտության տեսական ու գործնական նշանակությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ աշխատանքում մշակված եզրահանգումները և հետևությունները ունեն գիտական նշականություն և կարող են նպաստել հետազոտության թեմայի վերաբերյալ պատկերացումների ընդլայմանը և հանդիսանալ տեսական և գործնական աղբյուր՝ հետագա նմանատիպ աշխատանքների մշակման համար:

Ատենախոսությունը և սեղմագիրը պատրաստված են ներկայացվող պահանջներին համապատասխան, իսկ հեղինակի կողմից հրատարակած հոդվածներում և մենագիր աշխատություններում լիարժեքորեն արտացոլված են ատենախոսության հիմնական դրույթները: Ատենախոսության թեման և բովանդակությունը համապատասխանում են ընտրված մասնագիտությանը:

Ելնելով վերոշարադրյալից, գտնում ենք, որ Հայկ Մկրտչի Գրիգորյանի «Զինված հակամարտության կողմերի կատարած պատերազմական հանցագործությունների քննության միջազգային - իրավական կազմակերպական հիմքերը» դոկտորական ատենախոսությունը իրենից ներկայացնում է գիտական նորույթ պարունակող ամբողջական, արդիական, տեսական և գործնական նշանակություն ունեցող ավարտուն, ինքնուրույն հետազոտական աշխատանք, որը ներառում է միջազգային իրավունքի տեսության, օրենսդրության, իրավակիրառական պրակտիկայի համար կարևոր նշանակություն ունեցող իրավաբանական պատասխանատվության խնդիրների վերաբերյալ գիտական հիմնավորված լուծումներ: Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Հայկ Մկրտչի Գրիգորյանի «Զինված հակամարտության կողմերի կատարած պատերազմական հանցագործությունների քննության միջազգային - իրավական կազմակերպական հիմքերը» վերտառությամբ դոկտորական ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի «ՀՀ Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգով»

սահմանված պահանջներին, իսկ հեղինակը արժանի է, արժանի է իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի շնորհմանը:

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի պետաիրավական հետազոտությունների բաժնի 2021 թվականի հունիսի 2-ի նիստում, որին մասնակցել են բաժնի վարիչ, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր Հ.Մ. Ստեփանյանը, գլխավոր գիտաշխատող, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ.Հ. Սաֆարյանը, ավագ գիտաշխատողներ, իրավագիտության թեկնածուներ՝ Է.Ա. Ղազանչյանը, Ա.Վ.Շուքուրյանը, Ա.Ա.Աբրահամյանը, Բ.Վ.Ղազինյանը:

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի պետաիրավական
հետազոտությունների բաժնի վարիչ, իրավաբանական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Հ.Մ.Ստեփանյան**